ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
<<ԴԻԼԻՋԱՆ>> ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA DILIJAN NATIONAL PARK STATE NON-COMMERCIAL ORGANIZATION
МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ НАЦИОНАЛЬНИЙ ПАРК <<ДИЛИЖАН>> ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОМЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ

ՏՆՕՐԵՆ

N 26-183

«12» «Օգոստոս» 2014թ.

ԳԱԿ- ՇՀԱՇՁԲ-11/3 ծածկագրով շրջանակային
համաձայնագրեր կնքած մասնակիցներին
ըստ ցանկի

«ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ բնապահպանության նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված աշխատանքը: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում « ՇՀԱՇՁԲ-11/3(ԴԱՊ -ԱՇՁԲ-14/03) »:

Հայտնում եմ, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել Տավուշի մարզ ք. Դիլիջան, Թբիլիսյան խճ.2, «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ հասցեով, մինչև 2014 թվականի օգոստոսի 23-ը, ժամը 11:00-ը:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է՝ Ս. Գրիգորյանը:

Հայտերը կբացվեն Տավուշի մարզ ք. Դիլիջան, Թբիլիսյան խճ.2, «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ հասցում, 2014 թվականի օգոստոսի 23-ին, ժամը 11:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ բնապահպանության նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ տպագրական աշխատանքների ձեռքբերումը:

ՀՀ բնապահպանության նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ տպագրական աշխատանքի (որը կազմված է՝ 4 չափաբաժինից բուկլետներ և ուսուցողական գրքույկներ) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է հրավերի (ծանուցման) N 1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են՝ իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը (Հավելված N 2), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկը (Հավելված N 3): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում եմ կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

ՀՀ բնապահպանության նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ dilijannp@mail.ru:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, ՀՀ նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ կետի 7-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով ՀՀ նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Առդիր՝ 13 թերթ:

Հարգանքով՝ Ա.Դավթյան

Ս.Գրիգորյան
02682-70-32

Հասցե՝ 3901 ք. Դիլիջան Թբիլիսյան խճուղի 2
3901 Dilijan city Tbilisian freewoy 2
3901 г. Дилижан Тибилиское шоссе 2

Հեռ. /Tel./ /Тел./ 0-2682 -70-32 dilijannp@mail.ru
Արդշինինվեստբանկի Դիլիջանի բաժանմունք
Հ/հ 247250000699
ՀՎՀՀ -07610657

Հավելված № 1

# ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ
# ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
# № ՇՀԱՇՁԲ-11/3 (ԴԱՊ -ԱՇՁԲ-14/03) ծածկագրով գնման ընթացակարգի

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Չ/Մ | Քանակը | Համառոտ բնութագիրը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | **«Դիլիջան» ԱՊ-ի տարածքի «ժայռերը և բնական հուշարձանները» բուկլետի վերաբերյալ անհրաժեշտ նյութերի /տեղեկատվություն, նկարներ / պատրաստման տպագրություն** | հատ | 1000 | 1. Չափս՝ A4 /297մմ x 210մմ/,<br>2. Թուղթ՝ 170 գրամ կավճապատ,<br>3. Տպագրություն՝ երկկողմանի գունավոր,<br>4. Ծալքեր՝ 2 ծալք,<br>5. Գեղցիկ շարվածք և ձևավորման աշխատանք: |
| 2. | **«Դիլիջան» ԱՊ-ի «ֆլորայի միամյա և երկամյա բույսերը» ուսուցողական գրքույկի անհրաժեշտ նյութերի /տեղեկատվություն, նկարներ /պատրաստման, տպագրություն** | հատ | 1000 | 1. Էջերի քանակ՝ 24 /ներառյալ կազմը/,<br>2. Չափս՝ A4 /297մմ x 210մմ/,<br>3. Կազմի թուղթ՝ 220 գրամ կավճապատ,<br>4. Էջերի թուղթ՝ 120 գրամ կավճապատ,<br>5. Տպագրություն՝ երկկողմանի գունավոր,<br>6. Թերթերի ծալում, հավաքում և կարում,<br>8.Գեղցիկ շարվածք և ձևավորման աշխատանք |
| 3. | **«Դիլիջան» ԱՊ-ի հեծանվային երթուղու բուկլետի վերաբերյալ անհրաժեշր նյութերի /տեղեկատվություն, նկարներ և սխեմատիկ պատկեր, հայերեն և անգլերեն թարգմանությամբ/ պատրաստման, տպագրություն** | հատ | 1000 | 1. Չափս՝ A4 /297մմ x 210մմ/,<br>2. Թուղթ՝ 170 գրամ կավճապատ,<br>3. Տպագրություն՝ երկկողմանի գունավոր,<br>4. Ծալքեր՝ 2 ծալք,<br>5. Գեղցիկ շարվածք և ձևավորման աշխատանք: |
| 4 | **«Դիլիջան» ԱՊ-ի էկոտուրիստական երթուղիների ուսուցողական գրքույկի վերաբերյալ անհրաժեշր նյութերի /տեղեկատվություն, նկարներ և սխեմատիկ պատկերներ/ պատրաստման, տպագրություն** | հատ | 1000 | 1. Էջերի քանակ՝ 28 /ներառյալ կազմը/,<br>2. Չափս՝ A4 /297մմ x 210մմ/,<br>3. Կազմի թուղթ՝ 170 գրամ կավճապատ,<br>4. Էջերի թուղթ՝ 120 գրամ կավճապատ,<br>5. Տպագրություն՝ երկկողմանի գունավոր,<br>6. Թերթերի ծալում, հավաքում և կարում,<br>7. Գեղցիկ շարվածք և ձևավորման աշխատանք: |
| 5. | **Մատակարարումը** | | | Տավուշի մարզ ք. Դիլիջան, Թբիլիսյան խճ.2 |

Հավելված 2
«ԳԱԿ- ՇՀԱՇՁԲ-11/3» ծածկագրով
ընթացակարգի հրավերի
N ՇՀԱՇՁԲ-11/3 (ԴԱՊ-ԱՇՁԲ-14/03)ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

**ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ**
**ԴԻՄՈՒՄ**

_______________________________ -ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
_______________________________ -ի կողմից N ՇՀԱՇՁԲ-11/3 (ԴԱՊ-ԱՇՁԲ-14/03)ծածկագրով
Պատվիրատուի անվանումը
հայտարարված ընթացակարգի ________________________________________ չափաբաժնին
չափաբաժնի (չափաբաժինների) համարը
(չափաբաժիններին) և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_______________________________ -ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_______________________________ -ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

____________________________________________ -ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
____________________________________________ :
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

________________________________________ ______________________
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ.Տ.

«_____» ___________ 2014թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 3
«ԳԱԿ- ՇՀԱՇՁԲ-11/3» ծածկագրով
ընթացակարգի հրավերի
N ՇՀԱՇՁԲ-11/3 (ԴԱՊ-ԱՇՁԲ-14/03)ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

## Գ ն ի   ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N ՇՀԱՇՁԲ-11/3 (ԴԱՊ-ԱՇՁԲ-14/03) ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, ______________________________ -ն առաջարկում է պայմանագիրը կատարել
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
համաձայն հետևյալ գների՝

| Չափաբաժին-ների համարները | Գնման առարկայի անվանումը | Արժեք | ԱԱՀ-ն* | Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը (տառերով և թվերով) |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5=3+4 |
| 1 | «Գնման առարկայի չափաբաժնի անվանումը N1» | | | |
| 2 | «Գնման առարկայի չափաբաժնի անվանումը N2» | | | |
| | | | | |
| ... | ... | | | |
| ... | ... | | | |

- *3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:*
- *Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա փվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*

______________________________________________          ______________________
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)          (ստորագրությունը)

Կ.Տ.

«_____» ___________ 2014թ.
(ամսաթիվը, ամիսը)

**Հավելված 4**
**Նախագիծ**

# ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# № ՇՀԱՇՁԲ-11/3 (ԴԱՊ-ԱՇՁԲ-14/03)

ք. Դիլիջան «_____» «___________» 2014թ.

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Ա.Դավթյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և « ---------------------» ---------ն, ի դեմս -------------------------ի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## *1. Պայմանագրի առարկան*

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքներ (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Աշխատնքները և վճարել դրա համար:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի № 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն 30 աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Կապալառուն համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

## *2. Կողմերի իրավունքները և պարտականությունները*

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1. Աշխատանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Կապալառուի կողմից չկատարելու դեպքում հրաժարվել Աշխատանքից:

2.1.2. Եթե կատարվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Աշխատանքով անհատույց կատարման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Կապալառուից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կապալառուի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Աշխատանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Աշխատանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

2.1.4. Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կապալառուն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

2.1.4.1 Կապալառուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1. Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կապալառուին:

2.2.2. Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կապալառուն իրավունք ունի՝**

2.3.1. Պատվիրատուից պահանջել ընդունելու սույն պայմանագրին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը:

2.3.2. Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.3. Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը իրականացնել ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով: Ենթակապալի պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

**2.4 Կապալառուն պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքների կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

## *3. Աշխատանքի հանձնման և ընդունման կարգը*

3.1. Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրության) ստորագրմամբ:

Կապալառուն Աշխատանքի առանձին փուլի կատարման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված № 4):

3.2. Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3. Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

## *4. Պայմանագրի գինը*

4.1. Սույն պայմանագրով Կապալառուի կատարված Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է ___________ (_____________________) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2. Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի № 3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

### *5. Կողմերի պատասխանատվությունը*

5.1. Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքների կատարման որակի և սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված ժամկետի պահպանման համար:

5.2. Սույն պայմանագրի № 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3. Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացույցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասին գնի նկատմամբ:

5.4. Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում է Աշխատանքներ կատարելու արդյունքում Կապալառուին վճարման ենթակա գումարներից:

5.5. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ ուշացված յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05%-ի չափով:

5.6. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

### *6. Անհաղթահարարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)*

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այսպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

### *7. Այլ պայմաններ*

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման և պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցների նախատեսման պահից և գործում է մինչև 2014 թվականի դեկտեմբերի 25-ը:

7.2. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կապալառուին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման.

2) Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի շուկայական գների ավելի քան 20 տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները որոշվում են և դրանց փոփոխությունը գնահատվում է հետևյալ կերպ. Պատվիրատուն համաձայնեցման է ներկայացնում ՀՀ ֆինանսների նախարարություն փոփոխության մեխանիզմը, որը ստանալուց հետո եռօրյա ժամկետում կողմերի միջև կարող է կնքվել պայմանագրում փոփոխություն կատարելու համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առարկության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

7.4. Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

7.5. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6. Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի №№ 1, 2, 3 և 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:

7.7. Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8. Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

## *8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| **«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ** | ____________________ |
| | ____________________ |
| ՀՀ Տավուշի մարզ ք. Դիլիջան, Թբիլիսյան խճ.2 | ____________________ |
| «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ Կապան մ/ճ | ՀՀ ____________________ |
| ՀՀ 247250000699 | ՀՎՀՀ ____________________ |
| ՀՎՀՀ 07610657 | ____________________ |
| «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրեն | ____________________ |
| | ____________________ |
| ***Ա.Դավթյան*** | |
| --------------------------------- | --------------------------------- |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| **Կ.Տ.** | **Կ.Տ.** |

Հավելված №1
«____» «____________» 2014թ. կնքված
№ ՇՀԱՇՁԲ-11/3 (ԴԱՊ-ԱՇՁԲ-14/03) պայմանագրի

***ՊԱՏՎԻՐԱՏՈՒ***
**«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ**

ՀՀ Տավուշի մարզ ք. Դիլիջան, Թբիլիսյան խճ.2
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ Կապան մ/ճ
ՀՀ 247250000699
ՀՎՀՀ 07610657
«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի
տնօրեն

***Ա.Դավթյան***

---------------------------------
(ստորագրություն)
**Կ.Տ.**

***ԿԱՊԱԼԱՌՈՒ***
____________________
____________________
____________________
ՀՀ ____________________
ՀՎՀՀ ____________________
____________________
______________
____________________

---------------------------------
(ստորագրություն)
**Կ.Տ.**

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| | |
|---|---|
| **1.1. Գնման առարկան՝ աշխատանքների անվանումը** | **«Դիլիջան» ԱՊ-ի տարածքի «ժայռերը և բնական հուշարձանները» բուկլետի վերաբերյալ անհրաժեշտ նյութերի /տեղեկատվություն, նկարներ / պատրաստման տպագրություն** |
| **1.2. Գնման առարկայի՝ աշխատանքների մանրամասն նկարագիրը** | 1. Քանակ՝ 1000 օրինակ,<br>2. Չափս՝ A4 /297մմ x 210մմ/,<br>3. Թուղթ՝ 170 գրամ կավճապատ,<br>4. Տպագրություն՝ երկկողմանի գունավոր,<br>5. Ծալքեր՝ 2 ծալք,<br>6. Գեղցիկ շարվածք և ձևավորման աշխատանք: |
| **2.1. Գնման առարկան՝ աշխատանքների անվանումը** | **«Դիլիջան» ԱՊ-ի «ֆլորայի միամյա և երկամյա բույսերը» ուսուցողական գրքույկի անհրաժեշտ նյութերի /տեղեկատվություն, նկարներ /պատրաստման, տպագրություն** |
| **2.2. Գնման առարկայի՝ աշխատանքների մանրամասն նկարագիրը** | 1. Քանակ՝ 1000 օրինակ,<br>2. Էջերի քանակ՝ 24 /ներառյալ կազմը/,<br>3. Չափս՝ A4 /297մմ x 210մմ/,<br>4. Կազմի թուղթ՝ 220 գրամ կավճապատ,<br>5. Էջերի թուղթ՝ 120 գրամ կավճապատ,<br>6. Տպագրություն՝ երկկողմանի գունավոր,<br>7. Թերթերի ծալում, հավաքում և կարում,<br>8.Գեղցիկ շարվածք և ձևավորման աշխատանք |
| **3.1. Գնման առարկան՝ աշխատանքների անվանումը** | **«Դիլիջան» ԱՊ-ի հեծանվային երթուղու բուկլետի վերաբերյալ անհրաժեշր նյութերի /տեղեկատվություն, նկարներ և սխեմատիկ պատկեր, հայերեն և անգլերեն թարգմանությամբ/ պատրաստման, տպագրություն** |
| **3.2. Գնման առարկայի՝ աշխատանքների մանրամասն նկարագիրը** | 1. Քանակ՝ 1000 օրինակ,<br>2. Չափս՝ A4 /297մմ x 210մմ/,<br>3. Թուղթ՝ 170 գրամ կավճապատ,<br>4. Տպագրություն՝ երկկողմանի գունավոր,<br>5. Ծալքեր՝ 2 ծալք,<br>6. Գեղցիկ շարվածք և ձևավորման աշխատանք: |
| **4.1. Գնման առարկան՝ աշխատանքների անվանումը** | **«Դիլիջան» ԱՊ-ի էկոտուրիստական երթուղիների ուսուցողական գրքույկի վերաբերյալ անհրաժեշր նյութերի /տեղեկատվություն, նկարներ և սխեմատիկ պատկերներ/ պատրաստման, տպագրություն** |

| | |
|---|---|
| **4.2. Գնման առարկայի՝ աշխատանքների մանրամասն նկարագիրը** | 1. Քանակ՝ 1000 օրինակ,<br>2. Էջերի քանակ՝ 28 /ներառյալ կազմը/,<br>3. Չափս՝ A4 /297մմ x 210մմ/,<br>4. Կազմի թուղթ՝ 170 գրամ կավճապատ,<br>5. Էջերի թուղթ՝ 120 գրամ կավճապատ,<br>6. Տպագրություն՝ երկկողմանի գունավոր,<br>7. Թերթերի ծալում, հավաքում և կարում,<br>8. Գեղցիկ շարվածք և ձևավորման աշխատանք: |
| **5. Գնման առարկայի՝ աշխատանքները մատուցողին ներկայացվող պահանջը** | Պատրաստի արտադրանքի տեղափոխում |
| **6. Աշխատանքների մատուցման վայրը** | Տավուշի մարզ ք. Դիլիջան, Թբիլիսյան խճ.2 |

Հավելված №2
«____» «____________» 2014թ. կնքված
№ ՇՀԱՇՁԲ-11/3 (ԴԱՊ-ԱՇՁԲ-14/03) պայմանագրի

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ**

ՀՀ Տավուշի մարզ ք. Դիլիջան, Թբիլիսյան խճ.2
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ Կապան մ/ճ
ՀՀ 247250000699
ՀՎՀՀ 07610657
«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրեն

***Ա. Դավթյան***

---------------------------------
(ստորագրություն)
**Կ.Տ.**

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
___________________

___________________
___________________
ՀՀ ___________________
ՀՎՀՀ ___________________
___________________
___________________
___________________

---------------------------------
(ստորագրություն)
**Կ.Տ.**

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(հազար դրամ)

| **հ/հ** | **Գնման առարկայի՝ աշխատանքի անվանումը** | **Չափման միավորը** | **Միավորի գինը** | **Ֆինանսավորումը** | | **Նախատեսվում է գնել 2014 թվականին** | | **Ընդամենը** | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | պետական բյուջե | արտաբյուջե | **2-րդ կիսամյակ** | | | |
| | | | | | | **քանակը** | **գինը** | **քանակը** | **գինը** |
| 1. | «Դիլիջան» ԱՊ-ի տարածքի «ժայռերը և բնական հուշարձանները» բուկլետի վերաբերյալ անհրաժեշտ նյութերի /տեղեկատվություն, նկարներ / պատրաստման տպագրություն | հատ | | 1000 | - | 1000 | | 1000 | |
| 2. | «Դիլիջան» ԱՊ-ի «ֆլորայի միամյա և երկամյա բույսերը» ուսուցողական գրքույկի անհրաժեշտ նյութերի /տեղեկատվություն, նկարներ /պատրաստման, տպագրություն | հատ | | 600 | 400 | 1000 | | 1000 | |
| 3. | «Դիլիջան» ԱՊ-ի հեծանվային երթուղու բուկլետի վերաբերյալ անհրաժեշր նյութերի /տեղեկատվություն, նկարներ և սխեմատիկ պատկեր, հայերեն և անգլերեն թարգմանությամբ/ պատրաստման, տպագրություն | հատ | | 1000 | - | 1000 | | 1000 | |
| 4. | «Դիլիջան» ԱՊ-ի էկոտուրիստական երթուղիների ուսուցողական գրքույկի վերաբերյալ անհրաժեշր նյութերի /տեղեկատվություն, նկարներ և սխեմատիկ պատկերներ/ պատրաստման, տպագրություն | հատ | | - | 1000 | 1000 | | 1000 | |
| ***Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը*** | | | | ***2600*** | ***1400*** | ***4000*** | | ***4000*** | |

Հավելված №3
«_____» «_____________» 2014թ. կնքված
№ ՇՀԱՇՁԲ-11/3 (ԴԱՊ -ԱՇՁԲ-14/03) պայմանագրի

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ | ___________________ |
| ՀՀ Տավուշի մարզ ք. Դիլիջան, Թբիլիսյան խճ.2 | ___________________ |
| «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ Կապան մ/ճ | ___________________ |
| ՀՀ 247250000699 | ՀՀ ___________________ |
| ՀՎՀՀ 07610657 | ՀՎՀՀ ___________________ |
| «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրեն | ___________________ |
| ***Ա. Դավթյան*** | ___________________ |
| ---------------------------------- | ---------------------------------- |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| **Կ.Տ.** | **Կ.Տ.** |

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(հազար դրամ)

| հ/հ | Ձեռքբերվող ծառայությունների անվանումը | **Ֆինանսավորումը ՀՀ 2014 թվականի պետական բյուջեից և արտաբյուջեի հաշվին, ընդ որում՝ (ըստ ամիսների աճողական կարգով)** | | | | | | | | | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | I եռամսյակ | | | II եռամսյակ | | | III եռամսյակ | | | IV եռամսյակ | | | |
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | |
| 1. | «Դիլիջան» ԱՊ-ի տարածքի «Ժայռերը և բնական հուշարձանները» բուկլետի վերաբերյալ անհրաժեշտ նյութերի /տեղեկատվություն, նկարներ / պատրաստման տպագրություն | - | - | - | - | - | - | - | ***30%*** | ***30%*** | ***40%*** | - | - | **100%** |
| 2. | «Դիլիջան» ԱՊ-ի «Ֆլորայի միամյա և երկամյա բույսերը» ուսուցողական գրքույկի անհրաժեշտ նյութերի /տեղեկատվություն, նկարներ /պատրաստման, տպագրություն | - | - | - | - | - | - | - | ***30%*** | ***30%*** | ***40%*** | - | - | **100%** |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3. | «Դիլիջան» ԱՊ-ի հեծանվային երթուղու բուկլետի վերաբերյալ անհրաժեշր նյութերի /տեղեկատվություն, նկարներ և սխեմատիկ պատկեր, հայերեն և անգլերեն թարգմանությամբ/ պատրաստման, տպագրություն | - | - | - | - | - | - | - | ***30%*** | ***30%*** | ***40%*** | - | - | **100%** |
| 4. | «Դիլիջան» ԱՊ-ի էկոտուրիստական երթուղիների ուսուցողական գրքույկի վերաբերյալ անհրաժեշր նյութերի /տեղեկատվություն, նկարներ և սխեմատիկ պատկերներ/ պատրաստման, տպագրություն | - | - | - | - | - | - | - | ***30%*** | ***30%*** | ***40%*** | - | - | **100%** |
| | ***Ընդամենը*** | **-** | **-** | **-** | - | - | - | - | ***30%*** | ***30%*** | ***40%*** | - | - | ***100%*** |

Հավելված №4
«_____» «_____________» 2014թ. կնքված
№ ՇՀԱՇՁԲ-11/3 (ԴԱՊ -ԱՇՁԲ-14/03) պայմանագրի

| ***ՊԱՏՎԻՐԱՏՈՒ*** | ***ԿԱՊԱԼԱՌՈՒ*** |
|---|---|
| **«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ** | ______________________ |
| | ______________________ |
| ՀՀ Տավուշի մարզ ք. Դիլիջան, Թբիլիսյան խճ.2 | ______________________ |
| «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ Կապան մ/ճ | ՀՀ ________________ |
| ՀՀ 247250000699 | ՀՎՀՀ ________________ |
| ՀՎՀՀ 07610657 | |

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն №
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«_____» «_____________ » 2014թ.*

*Պայմանագրի անվանումը՝* ***Տպագրման աշխատանքների գնման պայմանագիր***

*Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «____________» 2014թ*

*Պայմանագրի համարը՝ №* ՇՀԱՇՁԲ-11/3 (ԴԱՊ -ԱՇՁԲ-14/03*)*

*Պատվիրատուն՝ ի դեմս «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա.Դավթյանի, և Կապալառուն՝ ի դեմս «_________________» ________________ի, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ սպորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.*

*Պայմանագրի (Համաձայնագրի) շրջանակներում Կապալառուն «___» «_________» 2014թ.-ից «___» « _________» 2014թ. ընկած ժամանակահատվածում մատուցել է հետևյալ Աշխատանքները.*

| Աշխատանքի մատուցման համառոտ նկարագիրը | Մատուցման ցուցանիշները | Մատուցման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| **Ընդամենը** | ------------- | ------------- | | ---------- |

*Վերոհիշյալ Աշխատանքների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:*

| **ԸՆԴՈՒՆԵՑ** | **ՀԱՆՁՆԵՑ** |
|---|---|
| ______________________________ | ______________________________ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| ազգանուն ________________________ | ազգանուն ________________________ |
| Կ. Տ. | Կ. Տ. |